#IDAHOBIT 2018

«Մեդիա կենտրոնում» տեղի ունեցավ քննարկում նվիրված Հոմոֆոբիայի, տրանսֆոբիայի և բիֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրվան: Քննարկման բանախոսներ ՆՍՀԿ փաստաբան՝ Արա Ղարագյոզյան, ՆՍՀԿ իրավաբան ՝ Անահիտ Մկրտչյանը, ՆՍՀԿ փաստաբան՝ Մարո Խաչատուրյանը . անդրադարձան ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանությանը Հայաստանում:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՀ-ՈՒՄ ԱՄՆ ԴԵՍՊԱՆԱՏԱՆԸ

Հանդիպում ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան նախաձեռնությամբ «Նոր Սերունդ» Մարդասիրական և «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ներն իրենց աշխատակիցների և ԼԳԲՏ+ համայնքի ներկայացուցիչների հետ:

«ԼԳԲՏԻ ԱՆՁԱՆՑ ՀԶՈՐԱՑՈՒՄ» ՉՈՐՍԱՆԳԱՄՅԱ ՍԵՄԻՆԱՐ ՎԱՐԺԱՆՔԻ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԸՆԹԱՑԸ

2018 թվականի, մարտի 27-30-ին տեղի ունեցավ «ԼԳԲՏԻ անձանց հզորացում» չորսանգամյա սեմինար վարժանքի առաջին դասընթացը:

«ՔՀԿ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՀԶՈՐԱՑՈՒՄ ՍԵՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ» ԵՐԿՕՐՅԱ ԴԱՍԸՆԹԱՑ

2018 թվականի ապրիլի 13-ից 14-ին Աղվերան քաղաքում տեղի ունեցավ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից կազմակերպված «ՔՀԿ կարողությունների զարգացում և հզորացում սեռականության ոլորտում» երկօրյա դասընթացը:

ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ #32

Սըր Էլթոն Ջոնը այն եզակի մարդկանցից է, որը ակտիվորեն զբաղվում է ՄԻԱՎ-ի կանխարգելման ոլորտին առնչվող հարցերով և ԼԳԲՏ+ համայնքի մարդու իրավունքների ջատագովությամբ ամբողջ աշխարհում: Միևնույն ժամանակ Հայաստանն այն եզակի երկրներից էր, որ Սըր Էլթոն Ջոնը չէր այցելել, և ՆՍՀԿ թիմն իր ողջ ջանքերը գործադրեց, որպեսզի Էլթոն Ջոն ՁԻԱՀ-ի կանխարգելման հիմնադրամի ուշադրությունը սևեռի Հայաստանի Հանրապետության կողմը: Ահա թե ինչպես 2018թ.-ի մայիսի 27-ին ՆՍՀԿ թիմն ունեցավ բացառիկ հանդիպում Սըր Էլթոն Ջոնի հետ Երևանում, հենց նրա հյուրանոցային համարում: Հանդիպման ընթացքում քննարկվեցին ԼԳԲՏ+ համայնքի կարիքներն ու խնդիրները ՄԻԱՎ-ի և մարդու իրավունքներին առնչվող ոլորտներում: Այնուհետև Սըր Էլթոն Ջոնը ՆՍՀԿ թիմի հետ ուղևորվեց ՁԻԱՀ-ի խանխարգելման հանրապետական կենտրոն, որտեղ ծանոթացավ կենտրոնի աշխատանքներին և կատարեց իր նկատառումները: Սըր Էլթոն Ջոնը շատ ոգևորված էր այդ հանդիպումների շարքից և հայտնեց իր պատրաստակամությունը՝ աջակցելու և խթանելու ՄԻԱՎ-ի կանխարգելումը և ԼԳԲՏ+ համայքնի իրավունքների ամրագրման գործընթացը Հայաստանում:
ՆՍՀԿ թիմը հայտնում է իր խորին երախտագիտությունը Սըր Էլթոն Ջոնին՝ Հայաստան ժամանելու և ՆՍՀԿ թիմին պատվելու ու հյուրընկալելու համար:

ԼԳԲՏ+ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԼԳԲՏ+ անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող փաստաբանները հույս են հայտնում, որ քաղաքական իրավիճակի փոփոխությամբ թե դատավորները, թե փաստաբանները, թե դատախազները իրենց աշխատանքի վայրում այսուհետ կղեկավարվեն մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքով:

«Մեդիա կենտրոնում» տեղի ունեցավ քննարկում նվիրված Հոմոֆոբիայի, տրանսֆոբիայի և բիֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրվան:

Քննարկման բանախոսներ ՆՍՀԿ փաստաբան՝ Արա Ղարագյոզյան, ՆՍՀԿ իրավաբան ՝ Անահիտ Մկրտչյանը, ՆՍՀԿ փաստաբան՝ Մարո Խաչատուրյանը . անդրադարձան ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանությանը Հայաստանում:

Ասուլիսի ընթացքում փաստաբան Մարո Խաչատուրյանն ասաց, որ ԼԳԲՏԻՔ համայանքը Հայաստանումսեգրեգացիայի է ենթարկվում:

«Անգամ փաստաբանը, որը պաշտպանում է այս մարդկանց իրավունքները, պիտակավորվում է, դատավորը, որը որոշում է կայացնում ի օգուտ այս անձանց, նույնպես պիատակավորվում է: Եթե մենք ունենանք արդար դատարաններ, անաչառ դատավորներ, մենք կարող ենք փոխել նաև մարդկանց մտածելակերպը, որը իրականում այդքան էլ սուր չէ, ինչպես որոշ խմբեր հրահրում ու բարձրաձայնում են կեղծ ազգայնասիրության ներքո»,-ասում է փաստաբանը:

Հոմոֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրը նշվում է 1999թ.-ից, երբ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը նույնասեռականությունը հանեց հոգեկան հիվանդությունների ցանկից:

2017-ին «Նոր սերունդ» մարդասիրական ՀԿ-ն ունեցել է 300-ից ավելի շահառու, որոնք խտրականության են ենթարկվել և դա արտահայտվել է զրպարտության, վիրավորանքի կամ բռնության միջոցով:

«Նոր սերունդ» ՀԿ-ի իրավաբան Անահիտ Մկրտչյանն ասում է, որ դա միայն օրենքների բացի խնդիր չէ, այլև հասարակության մեջ ձևավորված կարծրատիպերի և ընկալումների խնդիր: «Խտրականության բազմաթիվ դեպքեր են եղել զինվորական կոմիսարիատներում, որտեղ 18 տարին լրացած տղաները ծաղրանքի և վիրավորանքի են արժանացել իրենց սեռական կողմնորոշման համար:

Եղել են նաև ընտանեկան բռնության դեպքեր այդ անձանց նկատմամբ, և մենք փորձել ենք ֆինանսավորել, օգնել, որպեսզի ժամանակավոր կացարան ձեռք բերեն նրանք»,- ասում է Անահիտ Մկրտչյանը:

«Նոր սերունդ» ՀԿ-ի փաստաբան Արա Ղարագյոզյանն էլ ասում է, որ խտրականության հիքմով բազմաթիվ քրեական գործեր կան:

«Շատ են դեպքերը, երբ այդ անձինք խտրականության ու դաժան վերաբերմունքի են արժանանում ոչ միայն քաղաքացիների, այլև պետական մարմինների կողմից, նույն առողջապահական հաստատություններում կամ քրեակատարողական, ոստիկանական համակարգում»,-ասում է Ղարագյոզյանը:

Նա շեշտում է, որ խտրականության հիմքով քրեական գործով մեղադրյալները կամ կասկածյալների նկատմամբ չի կիրառվում կալանավորվումը՝ որպես խափանման միջոց. «Դա հիմք է տալիս ենթադրելու, որ նախկին իշխանությունները բավական կամք չեն ունեցել այդ գործերը բացահայտելու և մեղավորներին պատժելու համար»:

IDAHOBIT 2018

Հոմոֆոբիայի, տրանսֆոբիայի, բիֆոբիայի և ինտերսեքսֆոբիայի դեմ պայքարի միջազգային օր (IDAHOBIT)

2018 թվականի մայիսի 17-ին՝ Հոմոֆոբիայի, տրանսֆոբիայի, բիֆոբիայի և ինտերսեքսֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրվա (IDAHOBIT) առիթով ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան նախաձեռնությամբ «Նոր Սերունդ» Մարդասիրական և «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ներն իրենց աշխատակիցների և ԼԳԲՏ+ համայնքի ներկայացուցիչների հետ ունեցան հանդիպում դեսպանատանը կազմակերպված փոդքասթինգի շրջանակներում։
Հանդիպման ժամանակ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի աշխատակից Արման Սահակյանը խոսեց ԼԳԲՏ+ ակտիվիզմում տարիների իր փորձի և դրա արդյունքում ենթարկված խարանի ու խտրականության, հնչեցված բազմաթիվ սպառնալիքների ու ատելության խոսքի մասին՝ ինչը արտացոլում էր երկրում առկա հոմոֆոբիան։ Այնուհետև մասնակիցների կողմից ուղղված բոլոր հարցերին Ա. Սահակյանը տվեց սպառիչ պատասխաններ։
Հանիպմանը մասնակցեց նաև ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Միլսը, ով հատուկ շնորհակալություն հայտնեց Սահակյանին համարձակ գտնվելու և հանդիպմանը սեփական պատմությունով կիսվելու համար, այնուհետև շնորհավորեց մասնակիցներին օրվա խորհրդի առիթով։
Հանդիպման ավարտին նախատեսված էր նաև փոքրիկ հյուրասիրություն, որի ժամանակ մասնակիցները համտեսեցին ԼԳԲՏ+ համայնքը խորհրդանշող դրոշի գույներով պատրաստված թխվածքը։

«ԼԳԲՏԻ ԱՆՁԱՆՑ ՀԶՈՐԱՑՈՒՄ» ՉՈՐՍԱՆԳԱՄՅԱ ՍԵՄԻՆԱՐ ՎԱՐԺԱՆՔԻ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԸՆԹԱՑԸ

2018 թվականի, մարտի 27-30-ին տեղի ունեցավ «ԼԳԲՏԻ անձանց հզորացում» չորսանգամյա սեմինար վարժանքի առաջին դասընթացը:

Դասընթացի ընթացքում ներկայացվեցին «Մարդու իրավունքներ. պաշտպանության մեխանիզմներ», «Մարդու իրավունքների Եվրոպական դատարան», «Խարանի և խտրականության կանխարգելում», «Խոշտանգման արգելք» թեմաները:
Դասընթացի առաջին օրը՝ մարտի 27-ին փորձագետ Արա Ղարագյոզյանը ներկայացրեց «Խոշտանգման արգելք» թեման. Ինչ է խոշտանգումը, Խոշտանգման և վատ վերաբերմունքի տարանջատումը, որպես ՄԻԵԿ 3-րդ հոդվածի խախտման սահմանում, Խոշտանգման ենթարկված զոհերի գործերի քննության առանձնահատկությունները, Խոշտանգման և վատ վերաբերմունքի միջազգային չափանիշները և ՄԻԵԴ-ի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները:

2018 թվականի, մարտի 28-ին՝ «ԼԳԲՏԻ անձանց հզորացում մարդու իրավունքների ոլորտում» դասընթացի երկրորդ օրը փորձագետ Հասմիկ Հարությունյանը ներկայացրեց մարդու իրավունքները և մարդու իրավունքների Եվրոպական դատարան թեման. Մարդու իրավունքների պաշտպանության Եվրոպական համակարգը, ՄԻԵԿ իրավունքների պաշտպանության շրջանակը, ՄԻԵԴ դիմումի ընդունելիության չափանիշները: 2018 թվականի, մարտի 29-ին՝ «ԼԳԲՏԻ անձանց հզորացում մարդու իրավունքների ոլորտում» դասընթացի երրորդ օրը փորձագետ Հայկ Հայրապետյանը ներկայացրեց Խարանի և խտրականության կանխարգելում թեման. Խտրականության արգելքը միջազգային և ներպետական իրավական փաստաթղթերում, Խտրականության կատեգորիաները, Խտրականության դեմ իրավունքում ապացուցողական հարցերը, Խտրականության դրսևորումը բռնության միջոցով:
2018 թվականի, մարտի 30-ին՝ «ԼԳԲՏԻ անձանց հզորացում մարդու իրավունքների ոլորտում» դասընթացի երրորդ օրը փորձագետ Հայկ Հայրապետյանը ներկայացնում է մարդու իրավունքներ թեման՝ մարդու իրավունքների հասկացությունը, ծագումն ու սերունդները, ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների իրավիճակը Հայաստանում, ԼԳԲՏ անձանց առնչվող իրավական փաստաթղթերը և ՀՀ-ի ստանձնած պարտավորությունները, Մարդու իրավունքների պաշտպանության տեղական և միջազգային կառույցները և կազմակերպությունները:

Դասընթացի բոլոր թեմաները ներառում էին և տեսական, և գործնական հատվածներ, ուղեկցվում էին ակտիվ և բուռն քննարկումներով: Դասընթացի մասնակիցները զինվեցին խոր և բովանդակալից գիտելիքներով Մարդու իրավունքների պաշտպանության, Խարանի, խտրականության և խոշտանգման կանխարգելման ոլորտներում՝ մեծ ոգևորությամբ ու հետաքրքրվածությամբ սպասելով սեմինար-վարժանքի հաջորդ փուլերին, որոնց ընթացքում կստանան գիտելիքներ ու հմտություններ սեռականության, մշտադիտարկման և հաշվետվողականության, առաջնորդության, ակտիվիզմի, ռազմավարական ծրագրեր կազմելու, միջոցառումների կազմակերպման և հանրային խոսքի ոլորտներում:



Դանակահարված տրանս անձի վիրահատությունն ու հետագա բժշկական օգնությունն ամբողջությամբ իրականացվեց անվճար «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի միջամտության արդյունքում

2018թ.-ի ապրիլի 15-ին երեկոյան ժամը 02:30-ի սահմանում իր վարձակալած բնակարանում դանակահարվել է տրանս* անձ XX-ը:
Վերջինս համացանցի միջոցով ծանոթացած տղամարդու հետ ձեռք է բերել հանդիպման պայմանավորվածություն: Անծանոթ անձը չարաշահելով XX-ի վստահությունը, մուտք է գործել նրա բնակարան, սրճել, զրուցել: Այնուհետև, երբ տուժող XX-ը շրջվել է թիկունքով դեպի անծանոթը, վերջինս քաշել է XX-ի մազերից և դանակով հարվածել պարանոցին: Դանակը մխրճվել է XX-ի կոկորդը:
Անծանոթ անձը հեռացել է տանից, իր հետ վերցնելով Տուժողի հեռախոսը (iphone 7), mitsubishi մակնիշի ավտոմեքենայի բանալիները և տղամարդու բաճկոնը:
Տուժող XX-ը դանակահարող անձի հեռանալուց հետո, գրեթե ուժասպառ վիճակում, հանել է դանակը կոկորդից և սողալով հասել մինչև հարևանի դուռը: Հարևանները շտապ արձագանքել են, զանգահարել Շտապ օգնության ծառայություն և օգնել վիրավորին մինչև բժիշկների մոտենալը:
XX-ը տեղափոխվել է Երեբունի բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունք, որտեղ էլ առավոտյան ժամը 06:20-ի սահմանում ենթարկվել է վիրահատության:

Բժշկական միջամտություն ցուցաբերելու դիմաց բժիշկները XX-ին ուղեկցող անձանցից պահանջել են մոտ 300.000 ՀՀ դրամ:
«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն անմիջապես ձեռնամուխ է եղել և դիմել Առողջապահության նախարարություն, ապա նաև Երեբունի բժշկական կենտրոն, ներկայացնելով բավարար փաստարկներ՝ բժշկական օգնությունն անվճար տրամադրելու համար: Միջամտության արդյունքում Տուժողին բժշկական օգնությունն ամբողջությամբ տրամադրվել է անվճար:
«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից Տուժող XX-ին տրամադրվել է փաստաբան: Հարուցվել է քրեական գործ: Գործը գտնվում է նախաքննության փուլում:

ԼԳԲՏԻ ԱՆՁԱՆՑ ՀՁՈՐԱՑՈՒՄ» ՉՈՐՍԱՆԳԱՄՅԱ ՍԵՄԻՆԱՐ ՎԱՐԺԱՆՔԻ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԸՆԹԱՑԸ

2018 թվականի ապրիլի 13-ից 14-ին Աղվերան քաղաքում տեղի ունեցավ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից կազմակերպված «ՔՀԿ կարողությունների զարգացում և հզորացում սեռականության ոլորտում» երկօրյա դասընթացը:

Դասընթացի առաջին օրը՝ ապրիլի 13-ին, սեռականության փորձագետ Ալիկ Ուստյանը ներկայացրեց «Սեռականության սահմանումը և բաղադրիչները», «Կենսաբանական սեռ», «Սեռային ինքնություն և սեռական վարքագիծ», «Սեռական կողմնորոշում և նրա տեսակները» թեմաները:
Այնուհետև ՆՍՀԿ կամավորը ԱՄՆ-ից՝ Ռեժինա Հակոբյանը մասնակիցներին ներկայացրեց ԼԳԲՏԻ անձանց մարդու իրավունքները ԱՄՆ-ում. զարգացումները, կարևոր իրադարձությունները, փաստերը և ներկա իրավիճակը:

Դասընթացի երկրորդ օրվա ընթացքում ներկայացվեցին «Գենդեր և նրա տեսակները», «Գենդերային արտահայտում», «Գենդերային դերեր», «Գենդերային կարծրատիպեր», «Տրանսգենդերություն. տրանսգենդերության կոմպոնենտները» «Սեռական կողմնորոշման դրսևորումները տրանսգենդեր անձանց դեպքում» թեմաները:
Դասընթացի բոլոր թեմաները ներառում էին և տեսական, և գործնական հատվածներ, խմբային ինտերակտիվ աշխատանքներ և ուղեկցվում էին ակտիվ ու բուռն քննարկումներով:

ԾԻԱԾԱՆԻՑ՝ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆԸ

Մասսայական անհնազանդության խաղաղ ցույցերը հանգեցրին հնացած ու կոռումպացված ռեժիմի փլուզմանը: Այն կոչվեց Թավշյա հեղափոխություն, քանի որ մարդիկ ժողովրդավարության աննախադեպ հաղթանակի հասան առանց որևէ կրակոցի: Անհնազանդության գործողությունները փոքրամասնությունների համար պատմական ու շրջադարձային կետ դարձան:

«ԼԳԲՏԻ ակտիվիստները անհնազանդությունների ամենաակտիվ մասնակիցներից էին: Հասարակությունը սկսեց հասկանալ, որ մենք նույնպես հայրենասեր ենք, պայքարում ենք արդարությունը բոլորին հասանելի դարձնելու համար»,- պատմում է ԼԳԲՏԻ ակտիվիստ Արման Սահակյանը:

ԼԳԲՏԻ անձինք Հայաստանում առերեսվում են համատարած նախապաշարմունքի, խարանի ու խտրականության: Այդ պատճառով էլ շատ անհատների համար դժվար էր ընդգրկվել և ձայն բարձրացնել հեղափոխության ժամանակ:

ԱՎԵԼԻ ԱՆՎԱԽ ԵՆՔ

«Մեր համայնքը ավելի անվախ է դարձել: Տրանս անձինք դա ապացուցում էին՝ այլ ցուցարարների հետ փողոցներում անքուն գիշերներ անցկացնելով: Ամենուր սիրալիր մթնոլորտ էր ստեղծվել մի նպատակի շուրջ՝ տապալել կոռումպացված ռեժիմը և նոր Հայաստան կառուցել»:
Հեղափոխությունը դեռևս չի ավարտվել: Նոր կառավարության ռուսամետ ընդդիմադիրները պնդում են, որ ԱՄՆ-ն և ԵՄ-ը այլասերում են բերում Հայաստան՝ կազմաքանդելու հայ ավանդական ընտանիքները և երկիրը: ԼԳԲՏԻ անձանց խնդիրները դեռևս չափազանց հակասական են, և հիմա օրակարգի փոփոխությունը կախված է նոր կառավարությունից ու մարդու իրավունքների շարժումից:

«Մենք մեր ուժերի ներածին չափով անում ենք ամեն բան՝ մարդու իրավունքների շարժման անբաժանելի մասը դառնալու համար: Մեզ համար չափազանց դժվար է, քանի որ Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանները դեռևս չեն ընդունում մեր իրավունքները որպես մարդու իրավունքներ»: Մարդու իրավունքներով զբաղվող միջազգային կազմակերպությունները սատարում են Հայաստանում քաղաքացիական հասարակության և ժողովրդավարության ձևավորմանը:

«Մենք երախտապարտ ենք աջակցության համար: Նորվեգիայի Հելսինկյան կոմիտեն Հայաստանում հավասարության և ժողովրդավարության տարածման հարցում մեծ դեր ունի»,- ասում է Արման Սահակյանը:

«ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔ ՀԱՆՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ» ԵՌՕՐՅԱ ԴԱՍԸՆԹԱՑ

2018 թվականի մայիսի 23-25-ը տեղի ունեցավ ՀՀ ԱՆ ՔԿՀ ներկայացուցիչների համար նախատեսված «Խտրականության արգելք հանուն ժողովրդավար հասարակության» եռօրյա դասընթացը «ԼԳԲՏԻ անձանց իրավունքների խթանում հայաստանյան հասարակությունում» ծրագրի շրջանակներում:

Դասընթացի երեք օրերի ընթացքում իրավական փորձագետ Անահիտ Մկրտչյանը ներկայացրեց «Մարդու իրավունքներ», «Խարանի և խտրականության կանխարգելում», «Խոսքի ազատություն և ատելության խոսք» թեմաները: Դասընթացի առաջին օրվա թեման էր «Մարդու իրավունքներ»-ը, որի շրջանակներում քննարկվեցին «Մարդու իրավունքների հասկացությունը, ծագումն ու սերունդները», «ԼԳԲՏ անձանց՝ մարդու իրավունքների իրավիճակը Հայաստանում», «Մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմները», ներկայացվեցին և քննարկվեցին մի քանի դատական գործեր, «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան», «Մարդու իրավունքների եվրոպական դատարանը»:

Դասընթացի երկրորդ օրվա թեման էր «Խարանի և խտրականության կանխարգելումը», որի շրջանակներում փորձագետ Անահիտ Մկրտչյանը ներկայացրեց «Խտրականության արգելքը միջազգային և ներպետական իրավական փաստաթղթերում», «Խտրականության կատեգորիաները, որոշակի հատկանիշներ», «Խտրականության դեմ իրավունքում ապացուցողական հարցերը», «Խտրականության դրսևորումը բռնության միջոցով»:

Դասընթացի երրորդ օրվա թեման էր «Խոսքի ազատություն- ատելության խոսք»: Թեմայի շրջանակներում քննարկվեց հետևյալը՝ « Ի՞նչ է խոսքի ազատությունը: Ի՞նչ է ատելության խոսքը: Ինչպե՞ս տարբերել խոսքի ազատության իրացումն ատելության խոսքից», «Ատելության խոսքի համար պատասխանատվության գործող մեխանիզմները», «Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա ազատությունների ու իրավունքների անքակտելի հիմք», «Վիրավորանք, զրպարտություն», «Ատելության խոսքն առցանց տիրույթում»:
Դասընթացին ներկայացվող բոլոր նյութերն ուղեկցվեցին տեսահոլովակների դիտումներով և ինտերակտիվ վարժանքներով, որոնց միջոցով մասնակիցներն առավել դյուրին ընկալեցին մատուցվող թեման:
Դասընթացի ավարտին մասնակիցներին հանձնվեցին մասնակցության վկայականներ:

ՆՍՀԿ ԹԻՄՆ ՈՒՆԵՑԱՎ ԲԱՑԱՌԻԿ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍԸՐ ԷԼԹՈՆ ՋՈՆԻ ՀԵՏ

2018թ.-ի մայիսի 27-ին ՆՍՀԿ թիմն ունեցավ բացառիկ հանդիպում Սըր Էլթոն Ջոնի հետ Երևանում, հենց նրա հյուրնացային համարում: Հանդիպման ընթացքում քննարկվեցին ԼԳԲՏ+ համայնքի կարիքներն ու խնդիրները ՄԻԱՎ-ի և մարդու իրավունքներին առնչվող ոլորտներում: Այնուհետև, Սըր Էլթոն Ջոնը ՆՍՀԿ թիմի հետ ուղևորվեց ՁԻԱՀ-ի խանխարգելման հանրապետական կենտրոն, որտեղ ծանոթացավ կենտրոնի աշխատանքներին և կատարեց իր նկատառումները:

Սըր Էլթոն Ջոնը շատ ոգևորված էր այդ հանդիպումների շարքից և հայտնեց իր պատրաստակամությունը աջակցելու և խթանելու ՄԻԱՎ-ի կանխարգելումը և ԼԳԲՏ+ համայքնի իրավունքների ամրագրման գործընթացը Հայաստանում:

ՆՍՀԿ թիմը հայտնում է իր խորին երախտագիտությունը Սըր Էլթոն Ջոնին Հայաստան ժամանելու և ՆՍՀԿ թիմին պատվելու ու հյուրընկալելու համար:



«NEW GENERATION» Humanitarian Non-Governmental Organization

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպություն

Ժամանակին Համաքայլ ամսագիրը պարունակում է տվյալ ամսում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացված գործունեության համապարփակ նկարագիրը: